23. **Վաստունեան.** — Նոր ժամանակներս հիմնուած է՝ անխուսափելի կերպով պատական այս տպարանը : Նախ. Կաթող.-Պատր. Թէրզեան Ս. երբ Հռոմ անցաւ՝ Պապին հզօր պաշտպանութիւնը խնդրելու՝ իր «գերապայծառ»ութիւնն անկեղծօրէն չճանչցող պօլսահայ Կաթոլիկներուն դէմ, **1911** ին համանուն տպարանէն լոյս ընծայեց «Արձագանգ» շաբաթաթերթը, զոր ապա Պոլիս փոխադրեց և պահ մը տպագրել տուաւ Սաքաեան տպարանը (1911) :

ՄԻԼԱՆ (ՄԵԴԻՈԼԱՆ)

24. **Ամբրոսեան.** — Համանուն լտ. վարժարանի այս տպարանէն լատին լեզուաւ մէկ գիրք միայն լոյս ընծայուած է, **1624** ին, **Քերականութիւն հայերէն լեզուի** Ֆռանչիսքօ Ռիվօլայի, առանց գլխագիրի՝ մէկ տեսակ բոլորագիրով :

ԼԻՎՕՌՆՕ (ԼԵԻՎՕՌՆԱՆ կամ ԼԻՑՈՒՌՆԱՅ)

25Ա. **Յովհ. Վրդ. Ջուղայեցի.** — Նոր Ջուղայ (Սպահան) Ամենափրկիչ վանքին բարեջան առաջնորդ Խաչատուր Կեսարացի [որուն պիտի անդրադառնանք ՊԱՐՍԿԱՍՏԱՆի բաժինին մէջ,] միաբաններէն Յովհաննէս վարդապետը կ'ուղարկէ Եւրոպա, իրենց վանքին մէջ հրաշքով ծնունդ առնող տպարանական արուեստին կատարելագործմանը համար : — Յովհաննէսի ծնողքը կը կոչուէին Եղիազար և Անամելիք : — Տարուան մը պանդխտութենէ վերջ՝ Ջուղայի այս միաբանը կը հասնի Իտալիա, վասն զի իմացած էր թէ հայերէն ձուլուած տառեր այդ երկիրը գոյութիւն ունէին : Վենետիկի մէջ գտնուած գիրերուն չհաւնելով, կ'անցնի Հռոմ ուր սակայն արգելքներու կը բախի . հակառակ ասոնց՝ կ'աշխատի սկիզբ մը տալ գործին . յետոյ երբ կը տեսնէ թէ անկարելի է «Հաւատատարածի»ի ըռնակալութեան կողմէ յարուցուած խոչընդոտներուն յաղթել, կ'անցնի Լիվոռնօ քաղաքը՝ տպագրութեան լեզուէն հասկըցող արհեստաւորներու հետ : 3 տարի և 3 ամիս՝ գիշեր ցորեկ իր աշխատանոցին մէջ կապուած ու մեկանձ պարապող այս անձնուէր վարդապետը կ'աջողի հուսկ ուրեմն **1643** ին դրոշմել հայ տպագրական արուեստին չքնաղ պատիւ բերող գեղատիպ մատեան մը **Սաղմոսն Դաւթին**, «յիւրում տպարանի, զոր կայացոյց յԻտալիա, ի վայելուչ քաղաքն և ի նաւահանգիստն ի Լիվոռնոյ» : Այս Սաղմոսին ձախաղը սեւ ու կարմիր գիրերով տպուած է : Յիշատակարաններէն դիւրին է տեղեկանալ վանական այս տիպար տպագրիչին քաշած նեղութիւններուն : Հոդ է որ կը խոստովանի թէ այդ Սաղմոսը (1050 օրինակ) իբր նմոյշ հրատարակած է 80 օրուան մէջ՝ Ջուղայի իր հոգեւոր հօրը ղրկելու համար : Էն ուշագրաւ մասն է հետեւեալը . «...Վասն որոյ ընդունելի լիցին Տեառն իմոյ, վաստակ ծառայի քոյ, իբրեւ զնուէր անձնատուէր . վասն զի մտեալ որպէս ի պատերազմ, իբրեւ արեամբ տուգայ զսա» : — Արուեստին այլ եւս տիրացած՝ Յովհաննէս վրդ. այս մէկ գիրքը լոյս ընծայելէ վերջ, իր յօրինած և ձուլած բազմազան վայելուչ տառերը կը փոխադրէ հայրենիք : — Անկէ անդին՝ իր տպարանական գործունէութեան շարունակութիւնը տե՛ս ՊԱՐՍԿԱՍՏԱՆի բաժինին մէջ :